

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ՍՈՒՐԵՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԹԱՐՈՅԱՆԻՆ՝
ՔԱՎԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 40 ԵՎ ԲԵՐԻՈ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ
25 - ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱՆ ՍՊԱՍԱՌՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱԹԱՐՈՅԵԱՆ,
ՈՐ Ի ՆԱԼԷՊ, ՍԻՐԻԱ**

Ուրախությամբ փնդեկացանք, որ այս փարի լրանում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր քահանայագործության քառասուներորդ եւ Բերիոյ Տիրախնամ թեմում առաջնորդության քսանհինգերորդ փարեղարձը:

Սիրելի Սրբազան,

Ահաւասիկ, Բարձրեալի կամքով Դուք չորս փասնամեակ կարգուած էք իբրեւ հոգեւոր սպասաւոր Տիրոջ փոքր հօփին՝ մեր ժողովրդին, որը Սուրբ Թաղեոս եւ Սուրբ Բարդուղիմէոս առաքելների բարոգութեամբ արժանացաւ Քրիստոսի փըրկարար լոյսը ճանաչելու շնորհին եւ շուրջ երկու հազար փարիներ ճաշակում է քրիստոնէական հաւաքի կենսապարգել պատուները:

Մենք քաջածանօթ ենք ուխտապահ հոգեւորականիդ անմնացորդ նուիրումին եւ առանձնակի հաճոյքով ենք յիշում Քրիստոնէութիւնը Նայաստանում պեքական կրօն հոգակման 1700-ամեակի յոբելեանական փարում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջինի հեղ Տէր-Ջոր կարարած Մեր ուխտագնացութիւնը, երբ գոհունակութեամբ ականաւրես եղանք յանուն մեր ժողովրդի ու Սուրբ Եկեղեցու Ձեր անյոգնարեկ ջանքերին, հաւաքաւոր ու ծառայասէր Ձեր ընթացքի բարի արգասիքներին, ինչպէս նաեւ հայ եւ սիրիացի մեր երկու ժողովուրդների բարեկամութեան ամրապնդման գործում բերած Ձեր ներդրումին:

Քաջ ու բարի հովուի Ձեր յանձնառութիւնը օրհնութիւն է Բերիոյ բարեպաշտ մեր ժողովրդի կեանքում: Ձեր քաջալերանքով եւ Ձեր նախաձեռնութեամբ իրագործուել եւ իրագործուում են բազում եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր եկեղեցական, կրթական, ընկերային ու մշակութային կեանքի փարբեր ոլորտներում, որով Դուք արժանապէս վայելում էք սէրն ու գնահատանքը բարեպաշտ հայորդեաց:

Առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Մայր Հայրենիքում Ձեր իրագործած նախաձեռնություններին, ի մասնաւորի երկրաշարժից աղետալ գոյում կարիքաւոր հայորդեաց բերած Ձեր օժանդակութեանն ու Հայրենիք-Սփիւոք կապելի գորացմանը ներդրած Ձեր ջանքերին: Ձեր բազմաթիւ գործնական այցելութիւնները Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին լաւագոյն վկայութիւն են առ Հայրենի մեր երկիրն ու լուսոյ խորան Սուրբ Էջմիածինը Ձեր որդիական մշտաւառ սիրտը, որը խանդավառում է նաեւ Ձեր հօտի բարեպաշտ անդամներին:

Միրելի Սրբազան,

Յիշարժան Ձեր յոբելեանների առիթով համազգային մեր հոգեւոր կենտրոն Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը եւ ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ Բարձրեալի օրհնութիւնն ու օգնականութիւնը հայցելով Ձեզ:

Թող Ամենակալ Տէրը քաջառողջ արեւշապութիւն ու բիր բարիքներ պարգեւի Ձեզ, որպէսզի Դուք Ձեր հարուստ փորձառութեամբ ու հոգեւոր խանդավառութեամբ շարունակէք Ձեր անսակարկ սպասաւորութիւնը՝ ի պայծառութիւն Բերիոյ Տիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

«Շնորհք Տեսնն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ամենեւեւեւ ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ Գիրս Օրհնութեան ի 21-ն Օգոստոսի
յամի Տեսնն եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրաւանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 293